



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«**ԲՆԱԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ**
ՆԱԽԱՐԱՐ»



Մ. Մինասյան Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«07» 09 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 80

Ձեռնարկողը՝

«Տելիա Մայնինգ» ՍՊԸ

Ք. Երևան, Դավիթաշեն 2-րդ թաղ.2-րդ շ. 55 փարաժք

Գործունեությունը՝

«Աստղաբերդ» ՓԷԿ-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
«Սյունիքի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԶՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԶՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 80

«07» 09 2017թ.

«Տելիա Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Աստղաբերդ» ՓՀԷԿ-ի կառուցման նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	«Տելիա Մայնինգ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	ՀՀ Սյունիքի մարզ
Գործունեության կատեգորան՝	«Գ»

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և ներկայացվել «Աստղաբերդ» ՓՀԷԿ-ի կառուցման նախնական գնահատման հայտը:

«Աստղաբերդ» ՓՀԷԿ-ը նախատեսվում է կառուցել ՀՀ Սյունիքի մարզում, Ողջի գետի ձախ՝ Գեղի վտակի վրա՝ օգտագործելով գետի 1569մ÷1404մ նիշերի միջև ընկած անկումը:

«Աստղաբերդ» ՓՀԷԿ-ի շինարարությունը նախատեսվում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանում՝ Գեղի ջրամբարից վերև գտնվող հատվածում:

Նախագծված «Աստղաբերդ» ՓՀԷԿ-ի կառուցվածքները տեղակայվելու են Նոր Աստղաբերդ և Գեղի համայնքների վարչական սահմաններում:

«Աստղաբերդ» ՓՀԷԿ-ի համար անհրաժեշտ ջրառն իրականացվելու է Գեղի գետահովտի հոսանքի ուղղությամբ, Նոր Աստղաբերդ համայնքի վարչական սահմանում՝ 1569.0մ նիշ ունեցող գետահատվածում: Այդ նպատակով գետի վրա կառուցվելու է 2,5մ բարձրություն ունեցող պատվար՝ ափային տիպի ջրառ կառուցվածքով և անմիջապես գետից ջուր վերցնելու հնարավորությամբ: Գետի մնացորդային ելքը՝ 5200մ երկարությամբ, 1725մ տրամաչափի, 6.5խմ/վրկ թողունակությամբ ճնշումային ռեժիմով աշխատող պողպատե խողովակաշարի միջոցով տեղափոխվելու է «Աստղաբերդ» ՓՀԷԿ-ի շենք: Խողովակաշարն անցնելու է Նոր Աստղաբերդ և Գեղի համայնքների տարածքներով՝ հիմնականում գոյություն ունեցող ճանապարհին զուգահեռ: ՓՀԷԿ-ի շենքը նախատեսվում է տեղադրել գետի աջ ափին՝ Գեղի համայնքում /նիշը՝ 1404մ/:

Հաշվարկային գետահատվածում առաջացող 165մ ստատիկ ճնշումն էներգետիկ նպատակով օգտագործելու համար նախագծվել է 8107 կՎտ դրվածքային հզորությամբ ՓՀԷԿ՝ տարեկան 23964.3 հազ.կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրողականությամբ:

«Աստղաբերդ» ՓՀԷԿ-ի հիմնական ջրաէներգետիկ ցուցանիշներն են՝

- | | |
|------------------------------|-------------------------|
| Ջրի նիշը վերին բիեֆում – ՆԴՄ | - 1569 մ |
| Ջրի նիշը կայանի հանգույցում | - 1404.0 մ |
| Ստատիկ ճնշումը | - 165.0 մ |
| Հաշվարկային ելքը | - 6,5 մ ³ /վ |

Ապագա Տեղ օրինակ



Դրվածքային հզորությունը	- 8107 ՄՎտ
Հաշվարկային հզորությունը	- 7800 ՄՎտ
Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրանքը	- 23964.3 հազ.կՎտժ
Հիդրոագրեգատների քանակը	- 3 հատ

<<Տելիա Մայնինգ>> ՍՊ ընկերության կողմից կառուցվող <<Աստղաբերդ>> ՓՀԷԿ-ը կազմված է լինելու հետևյալ կառուցվածքներից.

- Ափային տիպի ջրառ հանգույց Գեղի գետի վրա
- Տղմագտարան
- 5200 մ երկարությամբ պողպատե ճնշումային խողովակաշար
- ՓՀԷԿ-ի շենք
- Հեռացնող ջրանցք
- Տրանսֆորմատորային կայանը և էլեկտրահաղորդման գծեր:

Աստղաբերդ ՓՀԷԿ-ի կառուցվածքները տեղադրվելու են Սյունիքի մարզի Գեղի գետի ավազանում:

Հիդրոէլեկտրակայանի կողմից արտադրված էլեկտրաէներգիան նախատեսված է համապետական էլեկտրական ցանց փոխանցելու համար:

Գլխամասային հանգույցը տեղակայվելու է Կիրս վտակի միացման հատվածում՝ Գեղի գյուղից վերև, Նոր Աստղաբերդ համայնքի վարչական սահմանում: Այն իրենից ներկայացնում է 2.5 մ բարձրությամբ բետոնային ջրթափ պատվար: Պատվարի երկարությունը կկազմի 24.0 մ: Պատվարի աջ կողմում տեղադրվելու է ափային տիպի ջրընդունիչ, որտեղ նախատեսվում է կառուցել տղմագտարան, որի հատակն ունենալու է թեքություն՝ երկայնական և լայնական ուղղություններով: Տղմագտարանը և գլխամասային հանգույցը փոքր չափերի են և փոքր մակերես են զբաղեցնում գետի աջ ափում: Խցի հիմնական չափսերը տրված էլքի համար կկազմեն B=6.0մ, L=44մ, H=4.7մ: Տղմագտարանի հիմքի հողային հանույթի ծավալը կազմում է 5800մ³, որն օգտագործվելու է հետլիցքի և աջափնյա հողային պատվարի համար, ուստի և օգտահանելու կարիք չի զգացվում:

Գլխային հանգույցում նախատեսվում է տեղադրել ջրաչափ սարքավորում MJK տիպի:

Գետի ձախակողմյան հատվածում կտեղադրվի հունային ձկնուղի՝ 550 լ/վրկ էլքով: Ձկնուղու կառուցման ժամանակ հաշվի են առնվելու այդ ոլորտում ժամանակակից լուծումները, որոնք թույլ են տալիս կառուցվածքներն առավելագույնս մոտեցնել բնական հունին: Նման կառուցվածքային լուծումով ապահովվելու է ձկան առավելագույն հուսալի տեղաշարժը: Ձկնուղու միջոցով ապահովվելու է ձկան անցումը ջրառ հանգույցից դեպի գետ, ինչպես նաև բնապահպանական էլքի բաց թողնումը Գեղի գետ:

Տղմագտարանից սկսած նախատեսվում է տեղադրել 1725մ տրամագծով և 5200մ երկարությամբ մետաղական դերիվացիոն խողովակաշարը: Խողովակաշարի ծրագիծը մինչև կայանի շենք հիմնականում անցնելու է գործող ճանապարհի եզրով՝ է 3-4 մ լայնությամբ նիստով:

ՓՀԷԿ-ի շենքը գտնվում է Կապան-Գեղի ավտոճանապարհի աջակողմյան հատվածում՝ Գեղի համայնքի վարչական սահմանում: Այն տեղադրվելու է <<Տելիա Մայնինգ>> ՍՊ ընկերությանը պատկանող փոքր տարածքի վրա, զբաղեցնելու է 450մ² մակերես: Ագրեգատների մոնտաժման և նորոգման համար նախատեսվում է շենքում տեղադրել կռունկ-հեծան: Շենքի առջևում նախատեսվում է բաց տիպի բեռնաթափման և մոնտաժման հրապարակ:

Կայանում նախատեսվում է տեղադրել կառավարման ամբողջովին ավտոմատացված համակարգով ագրեգատներ, որոնց կառավարման համակարգը հսկում է ջրառում ջրի քանակը



և մշտապես այն պահում կայուն մակարդակի վրա: Վերջինս կարող է ապահովել նաև հաստատուն բնապահպանական ելք՝ ողջ աշխատանքի ընթացքում:

Կայանային հանգույցում տեղադրվելու է 2 տրանսֆորմատոր՝ 6.3/110կՎ և 10000կՎԱ հզորությամբ: Ենթակայանը լինելու է բաց տեսակի և անվտանգության պայմաններից ելնելով՝ ցանկապատվելու է մետաղական ցանցով: Տրանսֆորմատորը տեղադրվելու է խճով լցված բետոնե ավազանում, որպեսզի լոկալացվի և բացառվի յուղի արտահոսքը գրունտային հորիզոն և դեպի գետ:

Ցանցին միացումը նախատեսվում է իրականացնել Գեղավան գյուղի տարածքով անցնող 35 կՎ գծին:

Հեռացնող ջրանցքն իրենից ներկայացնելու է ուղղանկյուն կտրվածքի երկաթբետոնե կառուցվածք, որն ագրեգատից ջուրը հեռացնելու է դեպի Գեղի գետ:

<<Աստղաբերդ>> ՓՀԷԿ-ի տարածքում նախատեսվում է կազմակերպված ձևով իրականացնել աղբի հավաքումը և անվտանգ օգտահանությունը: Աղբի հավաքումը պետք է իրականացվի գետի ջրատարածությունից դուրս՝ բացառելու համար աղբի թափանցումը դեպի գետ բարձր վարարման հորիզոնների ժամանակ:

Շահագործման փուլում <<Աստղաբերդ>> ՓՀԷԿ -ի շենքում սպասարկող անձնակազմի համար խմելու և տնտեսակենցաղային կարիքների համար օգտագործվող ջուրը բերովի է: Այդ նպատակի համար ՓՀԷԿ-ի շենքում խմելու ջրի համար նախատեսված է՝ 25լտր.մ տարողությամբ երկու կուտակիչներ, կամ այն բերվում է մոտակա աղբյուրներից: Իսկ տնտեսակենցաղային նպատակներով ջրօգտագործման համար շենքում նախատեսվում է 500լ տարողությամբ երկու կուտակիչներ:

Շահագործման փուլում, ՓՀԷԿ-ի շենքում կենցաղային կեղտաջրերի հեռացումը իրականացվելու է անջրթափանց հորի միջոցով, (որի ծավալը կազմում է 27լտր.մ): Վերջինս պարբերաբար դատարկվում և մաքրվում է սահմանված կարգով՝ համաձայնեցված համապատասխան մարմինների հետ:

Հակահրդեհային նպատակներով ջրամատակարարումն իրականացվելու է մոտակա ջրազծից, կամ ճնշումային ջրատարից: ՓՀԷԿ -ի շենքում նախատեսված է նաև կրակմարիչներ և ավազով լցված բարձիկներ:

Նախագծված <<Աստղաբերդ>> ՓՀԷԿ-ի ջրառի վայրը գտնվում է Նոր Աստղաբերդ համայնքի վարչական սահմանում: ՓՀԷԿ-ի գլխային ջրընդունիչ հանգույցից՝ ջրթափային պատվարի նիշից հաշվարկային ելքից /6.5խմ/վրկ/ բացի, այլ նպատակների համար ջրառ չի իրականացվում:


Գետի հունը չջրագրկելու համար որպես բնապահպանական ելք հաշվարկված է 0.55խմ/վրկ, որը ներքին բիեֆ է ուղարկվում նախագծված հունային ձկնուղու միջոցով:

ՀԷԿ-ի համար անհրաժեշտ ջրօգտագործումն իրականացվելու է ՋՌԿԳ կողմից տրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրօգտագործման ռեժիմի և տեխնիկատնտեսական ցուցանիշների համաձայն:

<<Աստղաբերդ>> ՓՀԷԿ-ի կառուցման համար ընտրված տարածքներում բնապահպանական տարածքները և պատմամշակութային հուշարձանները բացակայում են:

«Աստղաբերդ» ՓՀԷԿ-ի նախագծման նպատակով մասնագետների կողմից կատարվել են ուսումնասիրություններ նախագծվող ՓՀԷԿ-ի տեղամասում: Համձնաժողովը փաստում է, որ շինարարական աշխատանքների համար նախատեսված տարածքում չեն հանդիպում հազվագյուտ, էնդեմիկ, անհետացող կամ անհետացման եզրին գտնվող, «Կարմիր Գրքում» (2010թ.) գրանցված բուսատեսակներ կամ կենդանատեսակներ:

ՓՀԷԿ-ի ենթակառուցվածքների տարածքները գուրկ են բուսականությունից: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է առանց ծառահատումների:



«Աստղաբերդ» ՓՀԷԿ-ի շինարարությունը և շահագործումը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կունենա, թե՛ դրական, և թե՛ բացասական ազդեցություն: Որոշակի ազդեցություններ կլինեն հողի, ջրի, բուսական և կենդանական աշխարհի, իսկ շինարարության ընթացքում նաև օդի վրա:

Շինարարական աշխատանքներ իրականացնելիս ակնկալվում է, որ ժամանակավոր շինությունները կտեղադրվեն բուսածածկից զուրկ վայրերում՝ հողի մակերեսից բարձր: Այսպիսի լանդշաֆտներում կառույցներ իրականացնելիս, բացասական ազդեցությունը մեղմացնելու նպատակով, շինարարական նորմերով պահանջվում է կանաչապատել և բարեկարգել տարածքները: Պահանջվում է ՓՀԷԿ-ի շենքի կառուցումը ավարտելուց հետո հարթեցնել տարածքը, այն ցանկապատել, տնկել ծառեր և թփեր, ցանել խոտ:

Բացասական ազդեցությունը մեղմացնելու և բուսածածկը վերականգնելու նպատակով կկատարվի ծառատունկ, տնկարկները կկատարվեն ՀԷԿ-ի շենքի տարածքում: Օգտագործվելու են ծառատեսակներ, որոնք բնորոշ են տվյալ լանդշաֆտին

Կանաչապատման ընթացքում կիրականացվի նաև տվյալ լանդշաֆտին բնորոշ թփերի տնկարկ: Ծառատունկը կատարելուց հետո պատվիրատուն պարտավորվում է ապահովել տնկարկների խնամքը հետագա 4 տարիների ընթացքում:

Բացասական ազդեցությունները մեղմելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով համաձայն նախագծային փաստաթղթերի նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների ժամանակ՝ չորային քամոտ օրերին, ջրցան մեքենաների միջոցով խոնավացնել հողի և ավտոճանապարհների մակերեսը՝ փոշու արտանետումները կանխելու նպատակով,

- պահպանման ենթակա բուսաշերտը կտրվելու, տեղափոխվելու և պահեստավորվելու է, - մաքրվելու են նաև շինհրապարակները՝ կուտակված շինարարական աղբից, վառելիքաքսայողերից, օգտագործված ավտոաղբերից և այլ աղտոտումներից, որը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլատրված վայր,

- շինհրապարակների, ՓՀԷԿ-ի շենքի շրջակայքի մաքրում, կանաչապատում և բարեկարգում: Շրջակա միջավայրի պահպանման և ձկնապաշտպան կառույցների իրականացման համար նախատեսված է 4550.0 հազ. դրամ:

Վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը կարելի է եզրահանգել, որ նախատեսված միջոցառումների արդյունքում «Աստղաբերդ» ՓՀԷԿ-ի (կառուցման և հետագա շահագործման ընթացքում) տարածքի աղտոտվածությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով (օդ, հող, ջուր) կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Այսպիսով, հիմք ընդունելով ՓՀԷԿ-ի հզորությունը, խախտվող տարածքների մակերեսը, նախագծով մշակված բնապահպանական միջոցառումները՝ կարելի է ենթադրել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կունենա նվազագույն ազդեցություն՝ չգերազանցելով սահմանված նորմերը:

Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող գործունեությունն իրականացնել համաձայն ՀՀ հողային և ջրային օրենսգրքերի,

- Եթե նախատեսվող գործունեության շինարարության կամ շահագործման փուլում հայտնաբերվեն ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ առաջնորդվել ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն և N72-Ն որոշումներով,



- Հողի բերրի շերտի օգտագործումը կատարել համաձայն ՀՀ կառավարության 08.09.2001թ. N1396-Ն որոշման,

- Հողային աշխատանքներից առաջացած բուսահողի, ավելցուկային գրունտի, շինարարական աղբի պահպանումը կամ տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Տելիա Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Ա ստղաբերդ» ՓՀԷԿ-ի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Զ. Զուռնաչյան